ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 21

<<21>> հունվարի 2021 թվական գյուղ Մայիսյան

ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԸ ԵՎ ՀԻՄՔԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի>> 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով, քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մնացականյանի դիմումը՝ սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու մասին **որոշում եմ՝**

1.Հաշվի առնելով, որ քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մարմաշեն բնակավայրի 38-րդ փողոցի, 13-րդ հասցեում գտնվող 08-078-0016-0012 կադաստրային ծածկագրով 0.196 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում /հիմք՝ իրավունքների պետական գրանցման վկայական N 30012020-08-0025/ 2009 և 2020 թվականներին ինքնակամ կառուցված 67.16 քառակուսի մետր արտաքին մակերեսով շենքը, 145.07 քառակուսի մետր մակերեսով հիմքը /հետագայում ինքնակամ

շինություն/ բավարարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի>> 11-րդ կետում սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունները ճանաչել օրինական:

2.Օրինական ճանաչված շինությունների պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևի համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում է սույն որոշմանը:

3.Նշել, որ օրինական ճանաչված շինությունները՝

ա)չեն գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ)չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ)կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում:

դ)կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան:

ե)չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Ինքակամ կառույցն օրինական ճանաչելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա)շենքի արտաքին մակերեսը կազմում է 67.16 քառակուսի մետր, իսկ հիմքի՝ 145.07 քառակուսի մետր որպես բնակելի նշանակության կառույց, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետերի համաձայն, վաճառքի գինը շենքի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 10-ապատիկի չափով, իսկ հիմքի՝ բազային տուրքի 6-ապատիկ չափով՝ Հայաստանի Հանրապետության

կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն որոշմամբ հաստատված XIV գոտում ընդգրկված Մարմաշեն բնակավայրի համար սահմանված 0.055 գործակցի կիրառմամբ, վճարի չափը կազմում է՝

67.16 քառակուսի մետր X 10000 ՀՀ դրամ X 0.055=37000 (երեսունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,

145.07 քառակուսի մետր X 6000 ՀՀ դրամ X 0.055 = 47900 (քառասունյոթ հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրպետության դրամ

բ)ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափը սահմանվում է 84900 (ութսունչորս հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի բյուջե:

գ)սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Պարտավորեցնել հողամասի սեփականատեր՝ Արմեն Վոլոդյայի Մնացականյանին (անձնագիր՝ AT 0346783, տրված՝ 09.01.2020թ. 030-ի կողմից), սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

21.հունվարի.2021 թվական
Գյուղ Մայիսյան